

«Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2017թ. հունիսի 23-ից (հիմնադրման ամսաթվից) մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները	5
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր	6
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ	15
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17
6. Հաճախորդներին տրված վարկեր	17
7. Հիմնական միջոցներ	18
8. Ոչ նյութական ակտիվներ	18
9. Հարկում	19
10. Այլ ակտիվներ	20
11. Բանկերից ստացված վարկեր	20
12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20
13. Բաժնետիրական կապիտալ	20
14. Չուտ տոկոսային եկամուտ	20
15. Կոմիսիոն և այլ վճարների գծով զուտ եկամուտ	21
16. Անձնակազմի գծով, վարչական և այլ գործառնական ծախսեր	21
17. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ	21
18. Ռիսկերի կառավարում	22
19. Իրական արժեքի չափում	25
20. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետի վերլուծություն	26
21. Կապակցված կողմերի բացահայտումներ	26
22. Կապիտալի համարժեքություն	26
23. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն	27

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Մոզո» ՈՒՎԿ ՍՊ ընկերության Բաժնետիրոջը և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մոզո» ՈՒՎԿ ՍՊ ընկերության («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր Էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի Միջազգային Ստանդարտների խորհրդի *Պրոֆեսիոնալ Հաշվապահների Եթիկայի կանոնագրքի* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և, այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով Էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են Եական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի Եական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են Եական, երբ խելամտորեն կարող է անկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- ▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից տեղեկատվության բացահայտումների խելամուտությունը.
- ▶ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը.
- ▶ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝



Էրիկ Ջայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
ի դեմս լիազորված անձ Է. Ջայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

26 հունիսի, 2018թ.



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	<u>Ծան.</u>	<u>2017թ.</u>
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	48,582
Հաճախորդներին տրված վարկեր	6	970,784
Հիմնական միջոցներ	7	18,086
Ոչ նյութական ակտիվներ	8	4,057
Հետաձգված հարկային ակտիվ	9	29,694
Այլ ակտիվներ	10	8,810
Ընդամենը ակտիվներ		<u>1,080,013</u>
Պարտավորություններ		
Բանկերից ստացված վարկեր	11	805,878
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	91,734
Այլ պարտավորություններ		488
Ընդամենը պարտավորություններ		<u>898,100</u>
Կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	13	300,000
Կուտակված վնաս		(118,087)
Ընդամենը կապիտալ		<u>181,913</u>
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		<u>1,080,013</u>

Ստորագրվել է և վավերացվել են Ընկերության Ղեկավարության կողմից

Մեսրոպ Առաքելյան



Գլխավոր տնօրեն



Գևորգ Կարապետյան



Գլխավոր հաշվապահ

26 հունիսի, 2018թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար***(հազար ՀՀ դրամ)*

		2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար	
	Ծան.		
Տոկոսային և նմանատիպ եկամուտ	14	36,073	
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	14	(10,278)	
Չուտ տոկոսային եկամուտ		25,795	
Վարկի արժեզրկման գծով պահուստ	6	(24,360)	
Չուտ տոկոսային եկամուտ վարկի արժեզրկման գծով պահուստից հետո		1,435	
Կոմիսիոն և այլ վճարների գծով եկամուտ	15	26,112	
Կոմիսիոն և այլ վճարների գծով ծախսեր	15	(2,144)	
Կոմիսիոն և այլ վճարների գծով զուտ եկամուտ		23,968	
Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ		6	
Այլ գործառնական եկամուտ		110	
Անձնակազմի գծով ծախսեր	16	(54,224)	
Վարչական և այլ գործառնական ծախսեր	16	(119,076)	
Վնաս մինչև շահութահարկ		(147,781)	
Շահութահարկի գծով փոխհատուցում	9	29,694	
Ընդամենը հաշվետու ժամանակահատվածի վնաս		(118,087)	
Այլ համապարփակ եկամուտ		–	
Ընդամենը հաշվետու ժամանակահատվածի համապարփակ վնաս		(118,087)	

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար***(հազար ՀՀ դրամ)*

		2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատ- վածի համար	
	Ծան.		
2017թ. հունիսի 23-ի դրությամբ			-
Բաժնետիրական կապիտալի համալրում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	13		300,000
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապարփակ վնաս			(118,087)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			181,913

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար</i>
	Ծան.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	
Ստացված տոկոսային եկամուտ	26,828
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	21,605
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(2,144)
Վարչական և այլ գործառնական ծախսեր	(36,448)
Վճարված աշխատավարձ և հարակից հարկեր	(43,026)
Դրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	(33,185)
<i>Գործառնական ակտիվների զուտ ավելացում</i>	
Հաճախորդներին տրված վարկեր	(985,899)
Այլ ակտիվներ	(4,303)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում	(1,023,387)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(23,637)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում	(23,637)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	
Մուտքեր վարկերի ստացումից	800,000
Ստացված վարկերի գծով վճարված տոկոսագումար	(4,400)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի համալրումից	300,000
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	1,095,600
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	6
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	48,582
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	48,582

5

5-27 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:

(հազար ՀՀ դրամ)

1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ

(ա) Ընկերությունը և հիմնական գործունեությունը

«Սոգո» ՈՒՎԿ ՍՊԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է 2017թ. հունիսի 23-ին՝ որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝ Հայաստանում ֆիզիկական անձանց արագ և հարմարավետ ծառայությունների մատուցումը, այն է՝ ավտոմեքենաների գրավադրմամբ վարկերի և ավտոմեքենաների ձեռքբերման համար վարկերի տրամադրումը՝ 350,000 ՀՀ դրամից մինչև 5,000,000 ՀՀ դրամ, մինչև վեց տարի տևողությամբ: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից: Ընկերությունը գործում է ՀՀ ԿԲ-ի կողմից 2017թ. հունիսի 23-ին տրված ունիվերսալ վարկային կազմակերպության N 42 լիցենզիայի հիման վրա:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ բաժնետերն է Լատվիայում գրանցված AS ALPS INVESTMENTS JSC-ը: Ընկերության վերջնական վերահսկող անձը պարոն Լյգարս Զեշենֆելսն է:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 2 մասնաճյուղ, սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվին՝ 7 մասնաճյուղ, որոնց միջոցով էլ իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն էր՝ Հայաստանի Հայրապետություն, ք. Երևան, Պարոնյան փ. 8/4: Սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվին Ընկերության գլխավոր գրասենյակի իրավաբանական հասցեն փոխվել է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վարդանանց փ. 18/2, գրասենյակներ 4,5 և 6: Ընկերության աշխատողների միջին թվաքանակը 2017թ. ընթացքում կազմել է 7:

(բ) Գործարար միջավայրը Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Դեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում ներկայիս իրավիճակում Ընկերության գործունեության կայունությունը ապահովելու համար:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի («ՀՀՄՍԽ») կողմից թողարկված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՅՄՍ») պահանջների համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներառում են Ընկերության հիմնադրման ամսաթվից՝ 2017թ. հունիսի 23-ից, մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:

(բ) Զափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ամորտիզացված արժեքով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր

Իրական արժեքի չափում

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- ▶ այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- ▶ հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Ընկերությանը պետք է հասանելի լինի հիմնական կամ ամենաբարենպաստ շուկան: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Ընկերությունը օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնի հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնի հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- ▶ 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված),
- ▶ 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող առավելագույն ցածր մակարդակի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- ▶ 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող առավելագույն ցածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Ընկերությունը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները (բացառությամբ՝ հաճախորդներին տրված վարկերի) սկզբնապես ճանաչվում են գործարքի ամսաթվով, այսինքն՝ այն ամսաթվով, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Կանոնավոր կերպով գնմանը կամ իրացմանն են վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ իրացումը, որը պահանջում է ակտիվի մատակարարում շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում: Հաճախորդներին տրված վարկերը ճանաչվում են միջոցները հաճախորդի հաշվին փոխանցվելուն պես:

Ֆինանսական գործիքների սկզբնական դասակարգումը կախված է նրանց բնութագրից և նպատակից, ինչպես նաև ձեռքբերման ժամանակ ղեկավարության մտադրությունից: Բոլոր ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսումները, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Հետագա չափում

Հաճախորդներին տրված վարկերի հետագա չափումը կատարվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի օգտագործման սպասվող որջ ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ այն կիրառելի է, ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Ընկերության կողմից վճարումների կամ մուտքերի գնահատման վերանայման դեպքում: Ծշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է: Ընկերությունը ապաճանաչում է ակտիվները, երբ ակտիվները փոխանցվել են, և փոխանցումը բավարարում է ապաճանաչման պայմաններին:

Ընկերությունը փոխանցել է ակտիվը միմիայն, եթե

- ▶ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պայմանագրային իրավունքը, կամ
- ▶ Ընկերությունը պահպանել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը, բայց պարտավորություն է ստանձնել ամբողջությամբ և առանց էական ուշացման ստացված դրամական միջոցները երրորդ կողմին վճարել փոխանցման («pass-through») համաձայնությամբ:

Փոխանցման համաձայնությունները («pass-through») այն գործառնություններն են, երբ Ընկերությունը պահպանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պայմանագրային իրավունքները («սկզբնական ակտիվ»), բայց ենթադրում է պայմանագրային պարտավորություն՝ վճարելու այդ դրամական հոսքերը մեկ կամ մի քանի ընկերություններին («վերջնական ստացող»), երբ բավարարվում են այս երեք պայմանները:

- ▶ Ընկերությունը չունի որևէ պարտավորություն վճարել վերջնական ստացողներին, եթե չի հավաքագրել սկզբնական ակտիվին համարժեք գումար՝ բացառությամբ կազմակերպության կողմից տրված կարծաժամկետ կանխավճարների՝ տրամադրած գումարը և շուկայական դրույքաչափերով հաշվեգրված տոկոսները ամբողջությամբ վերականգնելու իրավունքով:
- ▶ Ընկերությունը չի կարող վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը՝ բացառությամբ վերջնական ստացողներին դրամական հոսքերը վճարելու պարտավորության համար որպես ապահովություն հանդիսանալու դեպքերի:
- ▶ Ընկերությունը պետք է փոխանցի դրամական միջոցների ցանկացած հոսքեր, որոնք հավաքագրում է վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման: Բացի այդ, Ընկերությունը իրավունք չունի վերաներդրել նման դրամական հոսքերը, բացառությամբ դրամական միջոցներում կամ դրանց համարժեքներում ներդրումների կարծաժամկետ հաշվարկային ժամանակահատվածում՝ հավաքագրման ամսաթվից մինչև վերջնական ստացողների համար պահանջվող փոխանցման ամսաթիվը, երբ այդ ներդրումների արդյունքում ստացված տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Փոխանցումը համարվում է ապաճանաչման պայմաններին բավարարող, եթե.

- ▶ Ընկերությունը փոխանցել է սեփականության հետ կապված ըստ Էուլթյան բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ
- ▶ Ընկերությունը ո՛չ փոխանցել, ո՛չ պահպանել է սեփականության հետ կապված, ըստ Էուլթյան, բոլոր ռիսկերն ու օգուտները, բայց փոխանցել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Ընկերությունն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնեմասային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները իրենց մեջ ներառում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ պարտավորություններ, բանկերի նկատմամբ պարտավորություններ, հաճախորդների նկատմամբ պարտավորություններ, թողարկված պարտքային արժեթղթեր, այլ փոխառու միջոցներ և ստորադաս վարկեր: Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարձակալություն

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները հավասարաչափ ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձատու

Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ճանաչվում են վարկի նվազագույն մարումների ներկա արժեքի չափով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ: Վարկերի գծով համախառն և զուտ ստացվելիք գումարների միջև տարբերությունը կազմում են չվաստակած ֆինանսական եկամուտն ու արժեզրկման պահուստը: Հաճախորդներին տրված վարկերից ստացված եկամուտները բաշխվում են հաշվետու ժամանակաշրջանների միջև այնպես, որ արտացոլեն անփոփոխ պարբերական տոկոսադրույք վարկերի գծով Ընկերության չնարված զուտ ներդրումների վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները բանկերում առանց պայմանագրային սահմանափակումների:

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր կամ, համապատասխանության դեպքում, արդյունավետ հեջում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքներ:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի, փոխառությունների և կրեդիտորական պարտավորությունների դեպքում՝ հանած ուղղակիորեն վերագրելի գործարքների հետ կապված ծախսումներ:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական և այլ պարտավորություններ, վարկեր:

Հետագա չափում

Ֆինանսական պարտավորությունների չափումը կախված է դրանց դասակարգումից, ինչպես նկարագրված է ստորև.

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններ և սկզբնական ճանաչման փուլում որպես իրական արժեքով չափվող՝ շահույթ կամ վնասի միջոցով նախատեսված ֆինանսական պարտավորություններ:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Այս դասը ներառում է նաև այն ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում ինչպես դա սահմանված է ՀՀՄՍ 39 ստանդարտով: Առանձնացված ներկառուցված ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք չեն նախատեսվել որպես արդյունավետ հեջավորման գործիքներ:

Առևտրային նպատակով պահվող պարտավորությունների գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են սկզբնական ճանաչման ամսաթվին որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, և միայն այն դեպքում, եթե բավարարում են ՀՀՄՍ 39-ի չափորոշիչներին: Ընկերությունը որևէ ֆինանսական պարտավորություն չի դասակարգել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Վարկեր և փոխառություններ

Այս դասը առավել համապատասխանում է Ընկերությանը: Սկզբնական ճանաչումից հետո տոկոսակիր վարկերն ու փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի (ԱՏ) մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացնելիս:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք հանդիսանում են ԱՏ-ի բաղկացուցիչ մաս:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

ԱՏ-ով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Այս դասը հիմնականում վերաբերում է տոկոսակիր վարկերին և փոխառություններին:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն վարկատուի կողմից էապես տարբեր պայմաններով կամ առկա պարտավորության պայմանները էապես փոփոխվում են, նման փոխանակումը կամ փոփոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Արձակուրդի գծով պահուստ

Արձակուրդի գծով պահուստը հաշվարկվում է՝ աշխատակցի նախորդ տասներկու ամիսների միջին օրական աշխատավարձն ու այլ վճարները բազմապատկելով հաշվետու ֆինանսական ժամանակաշրջանի վերջի դրությամբ չօգտագործված արձակուրդային օրերի թվով:

Հաշվեգրում և հետաձգում

Հաշվեգրումները և հետաձգումները հաշվառվում են հասույթը և ծախսերը ստանալու կամ իրականացնելու պահին ճանաչելու համար:

Պայմանական պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման համար միջոցների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվը չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում է, երբ տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտները ճանաչվում են այն չափով, որքանով հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավաստորեն չափել: Հետևյալ ճանաչման չափանիշները նույնպես պետք է բավարարվեն նախքան եկամուտի ճանաչումը:

Տոկոսային և նմանատիպ եկամուտ և ծախս

Ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների գծով տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվառվում է արդյունավետ տոկոսադրույքով: Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որով գեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի օգտագործման սպասվող ողջ ժամանակահատվածում ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին:

Հաշվարկը հաշվի է առնում ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային դրույթները և ներառում է ցանկացած վճար կամ հավելյալ ծախսեր, որոնք ուղղակիորեն վերաբերում են ֆինանսական գործիքին և կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, սակայն ոչ ապագա վարկային կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, եթե Ընկերությունը վերանայում է վճարումների կամ ստացումների գնահատականները: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա և հաշվեկշռային արժեքի փոփոխությունը գրանցվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Եկամուտների և ծախսերի ճանաչում (շարունակություն)

Արժեզրկումից կորստի պատճառով ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի արժեքի նվազման դեպքում տոկոսային եկամուտը շարունակվում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Եկամուտ պարտքերի հավաքագրումից և վաստակած տույժերից

Պարտքերի հավաքագրումից և ստացված տուգանքներից եկամուտը ճանաչվում է Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ հաճախորդից դրամական միջոցները ստանալու պահին:

Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գույքի, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ո՛չ հաշվապահական, ո՛չ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուրսորդ ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ ակտիվը պատրաստ է օգտագործման համար: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	<u>Տարի</u>
Համակարգչային տեխնիկա	3
Կահույք և պարագաներ	5
Վարձակալած միջոցների բարելավում	4
Այլ հիմնական միջոցներ	2

Վարձակալած միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն պատրաստ է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այն վայրում և այնպիսի վիճակում, որն անհրաժեշտ է հիմնական միջոցը ընկերության ղեկավարության նախատեսված նպատակով օգտագործելու համար: Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ իրավիճակների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են, որ այդպիսի ակտիվների արժեքը, հնարավոր է, որ չի փոխհատուցվի: Եթե կա նման հայտանիշ, և եթե ամկա հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը, այս ակտիվների կամ դրամաստեղծ միավորների գումարները նվազեցվում են մինչև փոխհատուցվող գումարի չափ: Սարքավորման փոխհատուցվող գումարը ակտիվի գուտ վաճառքի գնից և օգտագործման արժեքից առավելագույն գումարն է: Օգտագործման արժեքը գնահատելիս կանխատեսվող ապագա դրամական հոսքերը գեղջվում են մինչև ներկա արժեք՝ օգտագործելով նախքան հարկերը գեղջման դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակի արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այն ակտիվի համար, որոնք չեն գեներացնում զգալի չափով անկախ դրամական ներհոսքեր, փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է ակտիվը: Արժեզրկման կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկման հոդվածում:

Հիմնական միջոցի միավորը ապաճանաչվում է, երբ այն օտարվում է կամ ապագա ոչ մի տնտեսական օգուտ դրա շարունակական օգտագործումից չի ակնկալվում: Հիմնական միջոցների միավորի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ վնասը, հաշվարկված որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ներառվում է այն տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ, որի ընթացքում այն ապաճանաչվել է:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրեր և լիցենզիաներ:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները նախնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով: Ոչ նյութական ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով և ամորտիզացվում են օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում ուղիղ գծային մեթոդով: Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները վերանայվում են արժեզրկման տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, երբ ոչ նյութական ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրանց փոխհատուցվող գումարը:

Ամորտիզացիան հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության հետևյալ գնահատված ժամկետների ընթացքում:

	<u>Տարի</u>
Համակարգչային ծրագրեր	10
Լիցենզիա	1
Այլ ոչ նյութական ակտիվներ	1, 3, 10

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել:

Աշխատակիցների գծով հատուցումներ

Աշխատավարձերը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումները, տարեկան վճարվող արձակուրդը, անաշխատունակության դիմաց վճարները, պարգևավճարները և ոչ դրամական վարձատրությունները հաշվեգրվում են այն տարում, որում համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից: Աշխատակիցները ստանում են թոշակներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից օրենսդրությամբ համապատասխան: Վճարումները պետական բյուջե կատարվում են Ընկերության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով: Այդ վճարումները ճանաչվում են որպես ծախս առաջացման պահին:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և հայեցողական շահաբաժինների չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի արտաքին ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումների, ճանաչվում են որպես կապիտալի նվազեցում: Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավելի վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես Էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են և նման որոշումը կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Արտարժույթային փոխարկումներ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ փոխարկված կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթային փոխարկումներից օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես արտարժույթային գործարքներից զուտ օգուտ կամ վնաս՝ փոխարկման տարբերություններ: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքն է 580.10 ՀՀ դրամ 1 եվրոյի համար:

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Թողարկված, բայց մինչև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթիվը ուժի մեջ չմտած ստանդարտները ներկայացված են ստորև: Ընկերությունը նախատեսում է կիրառել այդ ստանդարտներն այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԻ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 39 ստանդարտին՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, արժեզրկման և հեջավորման հաշվառումը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բացի հեջավորման հաշվառումից, հետադարձ կիրառումը պահանջվում է, սակայն համադրելի տեղեկատվության վերահաշվարկը պարտադիր չէ:

Դասակարգում և չափում

Դասակարգման և չափման տեսակետից, Նոր ստանդարտը պահանջում է, որ բոլոր ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային և ածանցյալ գործիքների, գնահատվեն կազմակերպության ակտիվների կառավարման բիզնես մոդելի և գործիքների պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշների համադրության հիման վրա: ՀՀՄՍ 39-ի գնահատման դասերը փոխարինվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող և ամորտիզացված արժեքով չափվող դասերով: ՖՀՄՍ 9-ը նաև թույլ կտա կազմակերպություններին այն գործիքները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով, դասակարգել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե նման կերպ վարվելը վերացնում է կամ էականորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը: Բաժնային գործիքները, որոնք դասակարգված չեն որպես վաճառքի համար մատչելի, այսուհետ կարող են դասակարգվել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող՝ շահույթի ու վնասը հետագայում չվերադասակարգելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական պարտավորությունների հաշվառումը հիմնականում մնում է անփոփոխ ՀՀՄՍ 39-ի պահանջների համեմատ:

ՖՀՄՍ 9-ով սահմանված դասակարգման և չափման պահանջները, բացառությամբ արժեքի մասնակալվող վարկային կորուստների (ԱՎԿ) հաշվարկման, ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Ընկերության իրականացրած գնահատման հիման վրա, հաճախորդներին տրված վարկերը, որոնք ըստ ՀՀՄՍ 39-ի դասակարգված են որպես վարկեր և ստացվելիք գումարներ, ՖՀՄՍ 9-ի համաձայն չափվելու են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական ակտիվների արժեքի կորուստ

ՖՀՄՍ 9-ը հիմնովին փոխում է վարկային կորուստների ճանաչման մեթոդաբանությունը: Ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի կրած կորուստների մոտեցումը հետագայում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: Ընկերությունը պարտավոր է ճանաչել ակնկալվող վարկային կորուստների համար պահուստ բոլոր վարկերի և այլ պարտքային ֆինանսական ակտիվների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Պահուստը որոշվում է ԱՎԿ-ի հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի նշանակալի աճ, որի դեպքում պահուստը հիմնված է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության վրա: Ակտիվի ամբողջ ժամկետի վրա հիմնված ԱՎԿ պահուստը պետք է հաշվարկվի նաև գնված կամ ստեղծած արժեքի կորուստի ակտիվների համար, անկախ ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում վարկային ռիսկի փոփոխություններից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնելու գնահատում, թե արդյոք սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկը էականորեն աճել է՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Արժեքի կորուստի թեստավորման ենթակա ակտիվները կբաժանվեն երեք խմբի՝ կախված վարկի վատթարացման փուլից: Փուլ 1-ը ներառում է ակտիվներ, որտեղ վարկային ռիսկի նշանակալի աճ չի եղել կամ որոնք դասակարգված են որպես ցածր ռիսկային (վարկանիշը դասակարգված է որպես «Ներդրումային աստիճան» կամ ավելի բարձր), փուլ 2-ը ներառում է ակտիվներ, որտեղ եղել է վարկային ռիսկի նշանակալի աճ, և փուլ 3-ը ներառում է դեֆոլտային ակտիվներ: Փուլ 3-ում առկա նշանակալի ակտիվները անհատապես են թեստավորվում արժեքի կորուստի համար, մինչդեռ ոչ նշանակալի ակտիվների համար կատարվում է խմբային գնահատում: Փուլ 1-ում պահուստավորումը պետք է հավասար լինի 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային կորուստին: Փուլ 2-ում և 3-ում պահուստավորումը պետք է հավասար լինի ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

* Ընկերության բիզնես գործընթացներում դեռ ավարտված չէ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մեթոդաբանության ներդրումը: Նաև որոշ մասերի գարգացումը (մեծամասամբ նրանց, որոնք կապված են ներքին փաստաթղթավորման հետ, կամ որոնց ազդեցությունը Եական չէ ըստ գնահատումների) հետաձգվել է և նախատեսվում է ավարտել 2018թ. ընթացքում: Սողելի հաստատումը կկատարվի 2018թ. ընթացքում: Ընդհանուր առմամբ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելը կհանգեցնի համապատասխան հողվածների վարկային կորուստի ավելի վաղ ճանաչման և կմեծացնի տվյալ հողվածների գծով ճանաչված կորուստների չափը: Բացի այդ, ակնկալվում է, որ ՖՀՄՍ 9-ի համաձայն արժեզրկման հաշվարկները կլինեն ավելի անկայուն և ցիկլային, քան ՀՀՄՍ 39-ի համաձայն, որը հիմնականում պայմանավորված է առաջընթաց սցենարներում կիրառվող նշանակալի սուբյեկտիվության կիրառմամբ: ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները կիրառվում են հետադարձ կերպով՝ անցումային ազդեցությունը ճանաչելով չբաշխված շահույթում:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

Ստանդարտը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15-ը սահմանում է հիևց քայլից բաղկացած մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթի հաշվառման համար (որոշակի սահմանափակումներով), անկախ հասույթի գործարքի տեսակից կամ արդյունաբերության ոլորտից: Ստանդարտի պահանջները կիրառելի են նաև որոշ ոչ ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված շահույթի կամ վնասի ճանաչման և չափման համար, որոնք չեն հանդիսանում կազմակերպության բնականոն գործունեության արդյունք (օր.՝ հիմնական միջոցների կամ ոչ նյութական ակտիվների վաճառքը): Անհրաժեշտ են ծավալուն բացահայտումներ, ներառյալ ընդհանուր հասույթի տարանջատումը, տեղեկատվություն կատարողական պարտականությունների մասին, պայմանագրային ակտիվների և պարտավորությունների հաշվեկշիռների փոփոխությունները ժամանակաշրջանների միջև և հիմնական դատողություններն ու գնահատումները: Ղեկավարությունը գնահատում է, որ ստանդարտի կիրառումը Եական չի լինի, քանի որ Ընկերությունն ունի շատ սահմանափակ գործարքներ տվյալ ստանդարտի շրջանակներում:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

Ստանդարտը ուժի մեջ է մտնում 2019 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները պայմանագրի երկու կողմերի համար, այն է՝ հաճախորդ («վարձակալ») և մատակարար («վարձատու»): Նոր ստանդարտը պահանջում է վարձակալներին վարձակալությունների մեծ մասը ճանաչել իրենց ֆինանսական հաշվետվություններում: Վարձակալները կունենան միասնական հաշվապահական հաշվառման մոդել բոլոր վարձակալությունների համար՝ որոշակի բացառություններով: Վարձատուների հաշվապահական հաշվառումն Եականորեն չի փոխվել: Ղեկավարությունը գնահատել է, որ սույն ստանդարտի պահանջներին համապատասխանելու համար անհրաժեշտ կլինեն զգալի փոփոխություններ Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ներկայացված ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև պայմանական պարտավորությունների բացահայտումների վրա: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառվող գնահատման նշանակալի ոլորտները վերաբերում են մաշվածությանը և ամորտիզացիային, բռնագանձված գրավների իրական արժեքի չափմանը և արժեզրկման գնահատմանը: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունը կատարել է հետևյալ դատողությունները, որոնք ունեն ամենանշանակալի ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Վարկի արժեզրկման գծով պահուստ

Հաճախորդներին տրված վարկերի ընդհանուր արժեզրկման պահուստը գնահատվում է խմբային ձևով: Խմբային գնահատված արժեզրկման պահուստները ներառում են վարկային կորուստներ, որոնք բնորոշ են հաճախորդներին տրված վարկերի պորտֆելին, երբ առկա են օբյեկտիվ ապացույցներ, որոնք ենթադրում են, որ դրանք պարունակում են արժեզրկված ֆինանսական ակտիվներ, սակայն անհատապես արժեզրկված տարրերը դեռևս չեն կարող հայտնաբերվել: Խմբային ձևով գնահատված պահուստավորումը նաև ներառում է հաճախորդներին տրված դեֆոլտ եղած վարկերի պորտֆելի վարկային կորուստը, որոնք ներկայացնում են 60 օրից ավելի ժամկետանց վարկերը: Խմբային պահուստավորման գնահատման համար Ընկերությունը հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ դեֆոլտի հավանականությունը («PD») և կորուստների մեծությունը դեֆոլտի դեպքում («LGD»): Պահանջվող պահուստավորման չափը գնահատելու նպատակով արվում են ենթադրություններ, որպեսզի սահմանվի կորուստների մոդելավորվում և որոշվեն մուտքային պարամետրերը՝ հիմնվելով պատմական փորձի վրա: Խմբային արժեզրկման պահուստի գնահատման համար հաճախորդներին տրված վարկերի պորտֆելը խմբավորված է ըստ վճարումների հետաձգման օրերի.

- ▶ Ընթացիկ. հաճախորդներ առանց ժամկետանց վճարումների,
- ▶ 1-30 օր ժամկետանց. 1-30 օր ժամկետանց վճարումներ ունեցող հաճախորդներ,
- ▶ 31-60 օր ժամկետանց. 31-60 օր ժամկետանց վճարումներ ունեցող հաճախորդներ,
- ▶ Դեֆոլտ. դադարեցված պայմանագրերով հաճախորդներ և ավելի քան 60 օր ժամկետանց վճարումներ ունեցող հաճախորդներ,
- ▶ Չապահովված. դադարեցված պայմանագրերով և առանց գրավի հաճախորդներ:

Վարկային պորտֆելի խմբային արժեզրկման կորուստների որոշման համար օգտագործվող կարևոր ենթադրությունները ներառում են՝

Դեֆոլտի հավանականություն (PD)

- ▶ Ընկերությունը հաշվարկում է դեֆոլտի հավանականության գործակիցը՝ օգտագործելով վերջին 12 ամիսների պորտֆելի շարժի պատմական մատրիցաները,
- ▶ Յուրաքանչյուր ամիս պորտֆելի համար հաշվարկվում է շարժի մատրիցան, որտեղ ներկայացվում է վերլուծում նկարագրված պորտֆելի խմբերի միջև տեղի ունեցող ամսական շարժը,
- ▶ 12 ամիսների պատմական շարժից հաշվարկվում է դեֆոլտի հավանականությունը՝ կանխատեսելով առաջիկա 6 ամիսների շարժը: Արդյունքում որոշվում է դեֆոլտի հավանականության դրույքը պորտֆելի յուրաքանչյուր խմբին համապատասխան: 6 ամսվա դեֆոլտի հավանականությունը ենթադրյալ դեֆոլտի ճանաչման միջին ժամկետն է՝ սկսած դեֆոլտի հանգեցրած իրադարձությունից մինչև վարկի դեֆոլտի պահը:

Կորուստների մեծությունը դեֆոլտի դեպքում (LGD)

- ▶ Ընկերությունը սերտորեն հետևում է չվճարված վարկերի վերականգնումներին և ստացված իրական վերականգնումների հիման վրա յուրաքանչյուր ամիս վերանայում է պորտֆելների LGD դրույքները:
- ▶ LGD-ի հաշվարկի համար օգտագործվող նմուշը բաղկացած է բոլոր այն վարկերից, որոնք պատմականորեն դադարեցվել են՝ բացառությամբ այն վարկերի, որոնք դադարեցվելուց հետո վերականգնվել են: Եթե վարկը վերականգնվելուց հետո նորից դադարեցվում է, ապա այն վերադառնում է նմուշի մեջ:
- ▶ Հաշվարկված LGD դրույքը օգտագործվում է պորտֆելի բոլոր խմբերում, բացառությամբ չապահովված խմբի: Չապահովված խմբի համար կիրառվում է անկախ երրորդ կողմի առաջարկներից բխող արժեքի գնահատումը:

Մեկ այլ նշանակալի ենթադրություն, որն օգտագործված է խմբային արժեզրկման կորուստի որոշման համար, կապված է վերանայման գործընթացի հետ: Պայմանները վերանայվելուց հետո համապատասխան համաձայնագիրը այլևս ժամկետանց չի համարվում խմբային արժեզրկման գնահատման շրջանակներում: Դեկավարությունը շարունակաբար հետևում է վերանայված պայմանագրերին համոզվելու համար, որ բոլոր չափանիշները բավարարված են, և հավանական է, որ ապագա վճարումները տեղի կունենան: Համապատասխան համաձայնագրերը շարունակում են ենթարկվել խմբային արժեզրկման գնահատման, որոնք հաշվարկվում են վարկերի սկզբնական կամ ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքով:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվի վերականգնում

Ընկերությունը գնահատում է հարկվող շահույթի չափը հարկային կորուստների օգտագործման ժամանակահատվածում: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերլուծում է հետաձգված հարկի վերադարձելիությունը և նվազեցնում հետաձգված հարկային ակտիվը, եթե հավանական չէ, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը (տես Ծան. 9):

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ Ընկերությունը ակնկալում է, որ պահուստները կամ դրանց մի մասը կփոխհատուցվեն, օրինակ՝ ապահովագրության պայմանագրով, փոխհատուցումը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցման ստացումը հստակ է: Պահուստին վերաբերող ծախսը ներկայացվում է եկամուտների մասին հաշվետվությունում՝ զտված փոխհատուցումներով: Եթե ժամանակի մեջ փողի արժեքի ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են կանխատեսվող ապագա դրամական հոսքերի գեղջման միջոցով, օգտագործելով գեղջման՝ մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը, անհրաժեշտության դեպքում՝ նաև պարտավորությանը բնորոշ ռիսկերը: Չեղջման կիրառման դեպքում ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես փոխառության ծախս:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են՝

	<u>2017թ.</u>
Բանկային հաշիվների մնացորդներ	48,582
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	48,582

6. Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը բաղկացած են՝

	<u>2017թ.</u>
Սպառողական վարկեր	995,144
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	995,144
Հանած արժեզրկման գծով պահուստ	(24,360)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	970,784

Գրավ

Ընկերությունը տրամադրում է վարկեր մեքենայի գրավադրմամբ: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը, պահանջում է եկամուտը հաստատող հավելյալ փաստաթղթեր՝ համաձայն վարկային պայմանագրի, և հետևում է գրավի շուկայական արժեքին՝ վարկերի արժեզրկման գծով պահուստի վերանայման ժամանակ:

Ընկերությունը տրամադրում է միայն մեքենայի ձեռքբերման և մեքենայի գրավով վարկեր ֆիզիկական անձանց:

	Արժեզրկման գծով պահուստ
Արժեզրկման գծով պահուստի շարժը	
Արժեզրկման գծով պահուստը 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-
Ժամանակաշրջանի ծախս	24,360
Արժեզրկման գծով պահուստը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,360

(հազար ՀՀ դրամ)

7. Հիմնական միջոցներ

Ստորև ներկայացված աղյուսակը ներառում է հիմնական միջոցների շարժն՝ ըստ հոդվածների.

	<i>Կահույք և պարագաներ</i>	<i>Համակարգչա- յին և գրասենյակա- յին տեխնիկա</i>	<i>Վարձակալած միջոցների բարելավում</i>	<i>Այլ</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-	-	-	-	-
Ավելացումներ ժամանակահատվածի ընթացքում	3,491	13,600	1,179	1,209	19,479
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,491	13,600	1,179	1,209	19,479
Կուտակված մաշվածություն 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-	-	-	-	-
Մաշվածության ծախս ժամանակահատվածի ընթացքում	175	1,026	85	107	1,393
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	175	1,026	85	107	1,393
Հաշվեկշռային արժեք 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-	-	-	-	-
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,316	12,574	1,094	1,102	18,086

8. Ոչ նյութական ակտիվներ

Ստորև ներկայացված աղյուսակը ներառում է ոչ նյութական ակտիվների շարժը՝ ըստ հոդվածների.

	<i>Համակարգչային ծրագրեր</i>	<i>Այլ</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-	-	-
Ավելացումներ ժամանակահատվածի ընթացքում	3,963	195	4,158
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,963	195	4,158
Կուտակված ամորտիզացիա 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-	-	-
Ամորտիզացիա ծախս ժամանակահատվածի ընթացքում	60	41	101
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	60	41	101
Հաշվեկշռային արժեք 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-	-	-
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,903	154	4,057

(հազար ՀՀ դրամ)

9. Հարկում

Շահութահարկի գծով փոխհատուցումը բաղկացած է հետևյալ հոդվածներից.

	2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար
Շահութահարկի գծով ծախս	–
Հետաձգված հարկային փոխհատուցում	29,694
Շահութահարկի գծով փոխհատուցում	29,694

ՀՀ իրավաբանական անձինք պարտավոր են ինքնուրույն ներկայացնել հարկային հաշվետվություններ: Հայկական ընկերությունների համար շահութահարկի դրույքաչափը 2017թ. կազմել է 20%:

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

	2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար
Վնաս նախքան հարկումը	(147,781)
Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ	20%
Շահութահարկի գծով տեսական փոխհատուցում՝ օրենքով սահմանված դրույքաչափով	29,556
Չնվազեցվող ծախսեր	132
Արտարժույթի փոխարկումից չհարկվող եկամուտ	6
Շահութահարկի գծով փոխհատուցում	29,694

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

	Ճանաչում ֆինանսական արդյունքների մասին		
	2017թ. հունիսի 23-ի դրությամբ	հաշվետվությունում	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հարկվող ժամանակավոր տարբերությունների հարկային ազդեցությունն՝			
Հիմնական միջոցներ	–	(2,663)	(2,663)
Ոչ նյութական ակտիվներ	–	(63)	(63)
Արձակուրդի գծով պահուստ	–	770	770
Աշխատավարձ և պարգևատրումներ	–	1,470	1,470
Հաճախորդներին տրված վարկեր	–	8,448	8,448
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	–	21,732	21,732
Հետաձգված հարկային ակտիվ	–	29,694	29,694

(հազար ՀՀ դրամ)

10. Այլ ակտիվներ

Այլ ակտիվները բաղկացած են՝

	<u>2017թ.</u>
Հաճախորդներին տրված վարկերի գծով սպասարկման վճար	4,507
Ռեզիդենտ մատակարարներին տրված կանխավճարներ	4,005
Ոչ ռեզիդենտ մատակարարներին տրված կանխավճարներ	298
Ընդամենը այլ ակտիվներ	<u>8,810</u>

11. Բանկերից ստացված վարկեր

Պարտավորությունները բանկի նկատմամբ բաղկացած են՝

	<u>2017թ.</u>
Բանկերից ստացված վարկեր	805,878
Ընդամենը բանկերից ստացված վարկեր	<u>805,878</u>

2017թ. ընթացքում Ընկերությունը ստացել է 800,000 հազար դրամ գումարով վարկ հայկական բանկերից մեկից: Վարկային պայմանագրերի գործողության ժամկետը լրանում է 2020թ. հոկտեմբերին և նոյեմբերին: Վարկի օգտագործման նպատակն է՝ շրջանառու միջոցների համալրումը: Բանկից ստացված վարկերը ապահովված են Ընկերության դրամական միջոցներով և դրանց համարժեքներով և վարկային պորտֆելով:

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը բաղկացած են՝

	<u>2017թ.</u>
Ստացված ծառայությունների գծով կրեդիտորական պարտքեր	76,828
Աշխատավարձի և հարակից հարկերի գծով կրեդիտորական պարտքեր	7,350
Արձակուրդի գծով պահուստ	3,848
ԱԱՀ-ի և այլ հարկերի գծով կրեդիտորական պարտքեր	3,708
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	<u>91,734</u>

13. Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 30,000,000 սովորական բաժնետոմսից: Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 10 ՀՀ դրամ, որոնք ամբողջությամբ վճարված են:

14. Չուտ տոկոսային եկամուտ

	<i>2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար</i>
Տոկոսային եկամուտ	
Հաճախորդներին տրված վարկեր	35,614
Ժամկետային ավանդներ	459
	<u>36,073</u>
Տոկոսային ծախս	
Բանկերից ստացված վարկ	10,278
	<u>10,278</u>
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	<u>25,795</u>

(հազար ՀՀ դրամ)

15. Կոմիսիոն և այլ վճարների գծով զուտ եկամուտ

2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

Կոմիսիոն և այլ վճարների գծով եկամուտ

Հաճախորդներին տրված վարկերի գծով սպասարկման վճար

26,112

26,112

Կոմիսիոն և այլ վճարների գծով ծախս

Բանկի սպասարկման վճար

2,144

2,144

Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների գծով զուտ եկամուտ

23,968

16. Անձնակազմի գծով, վարչական և այլ գործառնական ծախսեր

Անձնակազմի գծով ծախսերը և վարչական և այլ գործառնական ծախսերը բաղկացած են՝

2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

Աշխատավարձ և պարգևատրումներ

54,224

Անձնակազմի գծով ծախսեր

54,224

Իրավաբանական և խորհրդատվական ծախսեր

63,669

Մարքեթինգ և գովազդ

22,870

Գործառնական վարձակալության գծով ծախսեր

8,930

Աուդիտորական ծառայությունների գծով ծախսեր

4,920

SS սպասարկման գծով ծախսեր

4,874

Վարկային տվյալների բազայի գծով ծախսեր

3,896

Գործառնական հարկեր

2,393

Կապ

1,620

Մաշվածություն և ամորտիզացիա

1,494

Գրասենյակային ծախսեր

1,408

Հիմնական միջոցների վերանորոգման և պահմանման ծախսեր

830

Գործուղման ծախսեր

489

Այլ

1,683

Ընդամենը վարչական և այլ գործառնական ծախսեր

119,076

17. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր բոլոր հիմնական միջոցների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Զանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(հազար ՀՀ դրամ)

17. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ (շարունակություն)

բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Դեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթիվը անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

դ) Վարձակալության գծով պարտավորություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել անչեղարկելի վարձակալության գծով պարտավորություններ:

18. Ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումը տեղի է ունենում՝ ելնելով ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերից: Ֆինանսական ռիսկը ներառում է շուկայական, այդ թվում՝ նաև արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկ, վարկային և իրացվելիության ռիսկեր: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառնային հիմնական նպատակներն են՝ սահմանել ռիսկի սահմանաչափեր, ապա ապահովել, որ ռիսկերից ազդեցությունը մնա այդ սահմաններում: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառնայինները նպատակ ունեն ապահովելու ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ գործունեություն՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Ֆինանսական ռիսկեր

Ընկերության ֆինանսական գործիքներից առաջացող հիմնական ֆինանսական ռիսկերն են՝ արտարժույթային ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, իրացվելիության ռիսկը և վարկային ռիսկը:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է արտարժույթների փոխարժեքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը ենթակա է արտարժույթային ռիսկի ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթներով գնումների անհամապատասխանության հետևանքով: Վերոհիշյալ գործարքները հիմնականում արտահայտված են Եվրոյով:

(հազար ՀՀ դրամ)

18. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական ռիսկեր (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակները ներկայացնում են արտարժույթային դիրքի կառուցվածքը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>Արժույթ</i>	<i>Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2017թ.</i>	<i>Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա, 2017թ.</i>
Եվրո	13.7%	8,664

<i>Արժույթ</i>	<i>Արտարժույթի փոփոխություն % 2017թ.</i>	<i>Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա, 2017թ.</i>
Եվրո	(6.3)%	(3,984)

Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերության կողմից ստացված վարկերը, ինչպես նաև հաճախորդներին տրված վարկերը ունեն ֆիքսված տոկոսադրույք:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը ի վիճակի չի լինի կատարել իր վճարային պարտավորությունները բնականոն և արտակարգ իրավիճակներում: Այս ռիսկը նվազեցնելու համար ղեկավարությունը ստեղծում է դիվերսիֆիկացված ֆինանսավորման աղբյուրներ՝ ի հավելումն իր հիմնական պահուստային բազայի, կառավարում է իրացվելիության ակտիվները և վերահսկում ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է ակնկալվող դրամական միջոցների հոսքերի գնահատումը և բարձրարժեք գրավի առկայությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ապահովելու համար:

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջված պարտավորությունների հիման վրա: Վճարումները, որոնք ենթակա են ծանուցման, դիտարկվում են այնպես, եթե այդ ծանուցումը անմիջապես ստացվեր: Այնուամենայնիվ, Ընկերությունը ակնկալում է, որ հաճախորդների մեծ մասը չի պահանջի պարտավորությունների վաղաժամկետ մարում Ընկերության կողմից հնարավոր ամենավաղ մարման ամսաթվով:

<i>2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>3-12 ամիս</i>	<i>1-5 տարի</i>	<i>Ընդամենը</i>
Ֆինանսական պարտավորություններ			
Բանկերից ստացված վարկեր	5,878	1,070,904	1,076,782
Կրեդիտորական և այլ պարտքեր	76,828	—	76,828
Ընդամենը չգեղջված ֆինանսական պարտավորություններ	82,706	1,070,904	1,153,610

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Ընկերությունը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Ընկերության ենթարկվածությունը վարկային ռիսկի տեղի է ունենում հաճախորդներին տրված վարկերի հետևանքով:

Վարկային ռիսկի քաղաքականության հիմնական ոլորտները ներառում են վարկի տրամադրման գործընթացը՝ ներառյալ վարկի վճարունակության ստուգումը, մոնիտորինգի մեթոդները, ինչպես նաև որոշումների կայացման սկզբունքները: Ընկերությունը գործում է վարկերի տրամադրման հստակ չափանիշների կիրառմամբ:

(հազար ՀՀ դրամ)

18. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Այս չափանիշները ներառում են հաճախորդի վարկային պատմության, վարկի մարման միջոցների ուսումնասիրությունը և վարկի օբյեկտի մասին պատկերացում կազմելը: Հաճախորդի վարկունակությունը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում ինչպես քանակական, այնպես էլ որակական գործոնները: Այս վերլուծության հիման վրա Ընկերությունը յուրաքանչյուր հաճախորդի համար սահմանում է վարկային սահմանաչափ:

Վարկային պայմանագրի ստորագրումից հետո, Ընկերությունը վերահսկում է վարկի օբյեկտը և հաճախորդի վճարունակությունը: Ընկերությունը մշակել է վարկային մոնիտորինգի գործընթաց, որն օգնում է շտկել պայմանագրի դրույթների ցանկացած անհամապատասխանությունը: Դեբիտորական պարտքի մնացորդները մշտապես վերահսկվում են՝ ապահովելով Ընկերության վրա վատ պարտքերի նվազագույն ազդեցություն և, անհրաժեշտության դեպքում, պահուստների ձևավորում:

Ժամկետանց, բայց ոչ արժեզրկված վարկեր ըստ վճարման ուշացման ժամկետների

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ընթացիկ	1-30 օր	31-60 օր	60 օրից առավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր	986,193	2,406	6,545	–	995,144
Վարկի արժեզրկման գծով պահուստ	(23,098)	(192)	(1,070)	–	(24,360)
Ընդամենը	963,095	2,214	5,475	–	970,784

Ժամկետանց վարկերի մեծ մասը արժեզրկված չէ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Ընկերությունը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Ընկերությունը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում՝ այդ թվում ներքին աուդիտը:

(հազար ՀՀ դրամ)

19. Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթացներ

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի մասնակիցները կօգտագործեն ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով: Ընկերությունը պետք է օգտագործի գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- ▶ 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված),
- ▶ 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող առավելագույն ցածր մակարդակի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- ▶ 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող առավելագույն ցածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, հաճախորդներին տրված վարկեր, ստացված վարկեր և դեբիտորական պարտքեր: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական գործիքների իրական արժեքները մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Ընկերությունը առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների, ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			Ընդամենը
	Ակտիվ շուկայում գնանշվող գներ (1-ին մակարդակ)	Էական դիտարկելի ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)	
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	48,582	–	–	48,582
Այլ ակտիվներ	–	–	4,507	4,507
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	970,784	970,784
Ընդամենը	48,582	–	975,291	1,023,873
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Բանկերից ստացված վարկեր	–	–	805,878	805,878
Այլ կրեդիտորական պարտքեր	–	–	76,828	76,828
Ընդամենը	–	–	882,706	882,706

(հազար ՀՀ դրամ)

20. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետի վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Ընկերության պայմանագրային չգեղջված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 18-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

	2017թ.		
	Մեկ տարվա ընթացքում	Մեկ տարուց ավել	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	48,582	–	48,582
Հաճախորդներին տրված վարկեր	27,659	943,125	970,784
Հիմնական միջոցներ	–	18,086	18,086
Ոչ նյութական ակտիվներ	–	4,057	4,057
Հետաձգված հարկային ակտիվ	–	29,694	29,694
Այլ ակտիվներ	4,303	4,507	8,810
Ընդամենը	80,544	999,469	1,080,013
Բանկերից ստացված վարկեր	5,878	800,000	805,878
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	91,734	–	91,734
Այլ պարտավորություններ	–	488	488
Ընդամենը	97,612	800,488	898,100
Չուտ դիրք	(17,068)	198,981	181,913

21. Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն ՀՀՄՍ 24 Կապակցված կողմերի բացահայտումներ ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված այն դեպքում, եթե մի կողմը հնարավորություն ունի մյուս կողմին վերահսկել կամ կարող է կիրառել էական ազդեցություն այլ կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման նկատմամբ: Կողմերի կապակցված լինելը որոշելիս հաշվի է առնվում կողմերի ոչ միայն իրավական ձևը, այլև փոխհարաբերությունների բնույթը:

2017թ. ընթացքում Ընկերությունը ստացել է խորհրդատվական ծառայություններ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող 2 ընկերություններից 63,070 հազար ՀՀ դրամի չափով: Հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդը կազմել է 63,070 հազար ՀՀ դրամ: Մինչև սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթիվը Ընկերությունը ամբողջովին վճարել է ստացված խորհրդատվական ծառայություններից մեկի գումարը:

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը կազմել է.

	2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար
Աշխատավարձ և պարգևատրումներ	27,428
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրություն	27,428

22. Կապիտալի համարժեքություն

Ընկերության կողմից կապիտալի կառավարման խնդիրներն են՝ Ընկերության գործունեության անընդհատության ապահովումը, ինչպես նաև տեղական մարմինների կողմից սահմանված պահանջներին բավարարումը, անհրաժեշտության դեպքում:

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

(հազար ՀՀ դրամ)

22. Կապիտալի համարժեքություն (շարունակություն)

Ընկերությունը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, ունիվերսալ վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն, որպեսզի նորմատիվային կապիտալը բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 150,000 հազար ՀՀ դրամ: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նորմատիվային կապիտալը համապատասխանում է սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017թ.
Հիմնական կապիտալ	178,910
Լրացուցիչ կապիտալ	-
Ընդամենը կապիտալ	178,910

23. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	<u>Բանկերից ստացված վարկեր</u>
Հաշվեկշռային արժեք 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	-
Ժամանակահատվածի ընթացքում բանկերից ստացված վարկերից մուտքեր	800,000
Ժամանակահատվածի ընթացքում վարկերի գծով հաշվեգրված տոկոսագումար	10,278
Ժամանակահատվածի ընթացքում վարկերի գծով վճարված տոկոսագումար	(4,400)
Հաշվեկշռային արժեք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	805,878